

ԱՄԵՆԱՊԱՏԻՒ ՊԱՏՐԻԱՐՔ Ս. ՀՕՐ ԾՆՆԳԵԱՆ ՊԱՏԳԱՄԸ ԲԵԹՂԵՀԷՄԻ ՍՈՒՐԲ ԱՅՐԷՆ

«Փանօք ի բարձունս Աստուծոյ եւ յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն...»:

Պաղեստին աշխարհի ցուրտ, բայց աստեղագարդ գիշերներէն մէկն էր, երբ լըսւեցաւ հրեշտակներու այս զմայլելի երգը. «Փանօք ի բարձունս Աստուծոյ», որով խեղճ հովիւներուն եւ համայն մարդկութեան կ'աւետուէր Ծնունդը Աստուածորդուն՝ Սիրոյ եւ խաղաղութեան Իշխանին. Ծնունդը՝ Փրկչին կամ էմմանուէլին, որ կը խոնարհէր իր բարձրութենէն ու կ'իջնէր մարդոց մէջ, իր իսկ արիւնով փրկելու մարդը իր Ադամական մեղքէն: Մարդկութիւնը երբեք այդպիսի երգ մը չէր լսած: Քրիստոսի Ծնունդը արդէն դարեր առաջ մարգարէացուած եւ ակնկալուող իրականութիւն մըն էր: Հրեայ ժողովուրդի մեծագոյն մարգարէները՝ Եսայի եւ Միքէ, արդէն դարեր առաջ գուշակած էին Ծնունդը «Սիրոյ եւ խաղաղութեան Իշխանին»։ Ան՝ որ պիտի ծնէր Հրէաստանի աննշան գիւղերէն մէկուն՝ Բեթղեհէմի մէջ, ըսելով. «Եւ դու Բեթղեհէմ, տուն Եփրաթայ, սակաւաւոր իցես լինել ի հազարաւորս Յուդայ, ի քէն ելցէ ինձ լինել Իշխան Իսրայէլի»:

Եւ այդ աննշան գիւղին եւ համեստ պայմաններուն մէջ ծնած նոյն Մանուկն էր, որ պիտի գար փոխելու աշխարհի պատմութիւնն ու նկարագիրը: Կայսրեր, արքաներ եւ թագաւորներ եկած ու անցած են. համաշխարհային պատմութեան մէջ Օգոստոս Կայսր ճանչցուած է իբր Հռոմի մեծագոյն կայսրերէն մին, որուն քաղաքական հանճարին եւ զինուորական տաղանդին շնորհիւ Հռոմ պիտի ունենար 200 տարուան խաղաղութեան շրջան մը: Իր օրով կայսրութեան սահմանները կը ճշդուէին եւ մեծ քաղաքները իրար կը կապուէին սալարկուած քարէ ճամբաներով, դիւրացնելով բնակիչներու երթեւեկը կայսրութեան սահմաններէն ներս եւ դուրս: Անոր օրով էր, որ Հռոմ կը հասնէր իր փառքի եւ ոյժի գագաթնակէտին: Սակայն, 2000 տարիներ ետք, տարուան այս շրջանին ան կը յիշուի անգամ մը միայն, երբ եկեղեցիներու խորաններէն կը կարդացուին հետեւեալ տողերը. «Այդ օրերուն հրահանգ ելաւ Օգոստոս կայսեր կողմէ մարդահամար կատարելու...»:

Անկասկած, հեռաւոր Պաղեստինի մէջ Մանուկի մը Ծնունդը աննշան երեւոյթ մը կրնար ըլլալ Օգոստոս կայսեր համար, եթէ միայն ան գիտնար որ այս համեստ Մսուրին մէջ ծնող Մանուկը պիտի դառնար անհաւատալիօրէն շատ աւելի նշանաւոր մէկը որուն անունը 2000 տարիներէ ի վեր միլիոնաւոր մարդոց շրթներուն վրայ է անդադար. Մէկը՝ որ պիտի կոչուէր «Թագաւոր Թագաւորաց» եւ «Որդի Բարձրելոյն Աստուծոյ»: Այսօր, Օգոստոս Կայսեր անունը դարձած է հեռաւոր ու տարտամ արձագանգ մը միայն, մինչ այս Մսուրին մէջ ծնած Մանկան անունը կը կրկնուի աղօթքներու մէջ ամէն օր եւ ամէն ժամ, սիրով, օրհնութեամբ եւ գիտակից երկիւղածութեամբ:

Նոր Տարիին՝ այսինքն Կեանքի Տօնին անմիջապէս յաջորդող առաջին տօնը նուիրւած է Աստուածորդուն Ծննդեան յիշատակին, որ իբր «Աքանջելի եւ մեծ խորհուրդ» յայտնուեցաւ մարդկութեան: Աստուածորդուն ծնունդով Մարդուն հոգեկան եւ բարոյական կեանքն էր որ կը վերածնէր. Անոր Ծնունդը կու գար սկիզբ մը դառնալու նոր գաղափարներու, սրբացեալ կեանքի եւ դէպի Աստուած ձգտող Մարդուն՝ որ օժտուած էր բարոյական բարձր նկարագրով եւ հոգեկան իրա՛ւ արժանիքներով: Քրիստոս իր խոնարհութեամբ փորձեց Հայր Աստուծմէ հեռացած Մարդը ետ մօտեցնել իր Յաւիտեանական Հօր: Ու Ծննդեան այդ լուռ ու սուրբ գիշերուան մէջ երեւցած աստղը իբր նպա-

տակակէտ ունենալով, Արեւելքէն եկող Մոզերը անոր նայեցան սիրով եւ հաւատքով, եւ աննկարագրելի խաղաղութիւն մը պարուրեց անոնց հոգիները եւ գացին Բեթղեհէմ, մատուցելու իրենց յարգանքն ու սէրը Նորածին Արքային:

Քրիստոսի Ծնունդով Մարդուն մէջ միաժամանակ կը ծնէր սէր ու ձգտում դէպի կատարելութիւն, որովհետեւ այս աշխարհը անկատար էր, կազմուած նոյնպէս անկատար մարդոցմէ, ու այս անկատար աշխարհին էր որ Հայր Աստուած կը ղրկէր մեծագոյն նուէրը՝ իր Միածին զաւակը: Այո՛, Հայր Աստուած, իր Որդւոյն անձին միջոցաւ կ'իջնէր աշխարհ Մարդը բարձրացնելու երկինք, որովհետեւ փրկագործութիւնը Հայր Աստուծոյ յաւիտենական ծրագիրն էր, ու ատոր համար ալ Ան մարդացաւ աստուածացնելու Մարդը: Եւ մենք՝ մարդ արարածներս, ստացողներն ենք այդ բացառիկ ու թանկարժէք Նուէրին: Աստուած մեզի համար էր որ խոնարհեցաւ, ու փրկագործութեան Ընծան զոր կը նուիրէ մեզի, պայմանադրական նուէր մը չէ, մենք ո՛չ մէկ ձեռով կրնանք փոխարինել ա՛յն՝ ինչ որ Հայր Աստուած ըրաւ մեզի համար: Միակ բանը որ կրնանք ընել՝ այդ ալ երախտագիտութեամբ, սիրով եւ օրհնութեամբ զայն ընդունիլն է:

Իսկ հիմա որ ունինք այդ ընծան, ինչ լաւ պիտի ըլլար եթէ մեզմէ իւրաքանչիւրս իրեն համար ունենար նաեւ ազնիւ ու բարի իտէալի աստղ մը, որուն նայելով առաջնորդէր իր խարխափող կեանքը: Եթէ մենք չունինք լուսաւոր իտէալներ, մեր կեանքերը անպայմանօրէն կը դառնան անիմաստ քաշկռտութիւն: Ով որ չունի իր իտէալի աստղը ան դատապարտուած է ջախջախուելու կեանքի իրականութեան խարակներուն վրայ: Ա՛յն երիտասարդութիւնը որ չունի իտէալը իր նախնիքներէն իրեն ժառանգ մնացած հոգեւոր եւ մտաւոր արժէքները աճեցնելու, չկրնար որեւէ կոչումի ծառայել. ու վստահ եղէ՛ք, որ անոնց կեանքերը դատապարտուած են ձախողութեան: Առանց իտէալի մարդ կ'ապրի անասնօրէն, չկրնար գտնել մտքի բարձրութիւն, հոգիի խաղաղութիւն եւ երեւակայութեան թռիչք: Անիմաստ ու անիտէալ ապրող անձը նման է կեանքի աղեղէն արձակուած աննպատակ նետին, որովհետեւ բարոյական կեանքէն հաճոյք զգալու համար պէտք է իտէալ մը առաջադրել ու հասնիլ ատոր:

Այսօր, հրեշտակներու երկնային մեղեդիով, մեզի կը տրուի բարի լուրը Աստուածայայտնութեան, որուն խորհուրդով սկիզբը կը դրուէր մարդկային կեանքի հոգեկան եւ բարոյական կատարելութեան: Ու այդ գիշերուան լռութեան մէջ լսող հրեշտակային մեղեդին, սիրելի հաւատացեալներ, կը պարունակէ երեք էական գաղափարներ. «Աստուած, խաղաղութիւն եւ բարի-կամեցողութիւն»: Երեք հրեղէն բառեր, որոնք Ծննդեան քաղցր խորհուրդին հետ կը բերէին Մարդուն ամբողջ երազներն ու իղձերը: Սակայն այս մտորին մէջ այս երեկոյ ծնող Մանուկը իր հետ կը բերէր ամենակարեւորը՝ Սիրոյ եւ եղբայրսիրութեան իտէալը, որմէ պարպուած էր աշխարհը, եւ արդէն ինչ է էութիւնն ու գաղտնիքը քրիստոնէութեան եթէ ոչ՝ Սէրը: «Փա՛ռք ի բարձունս Աստուծոյ եւ յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն» նախագասութիւնը, յաւիտենական եւ խտացած պատգամն էր մարդկային հոգիի փրկութեան: Աստուծոյ նկարագիրը հասկցած են միայն ջինջ ու պարզ հոգիի տէր մարդիկ, անոնք որոնք գիտցած են սիրել իրենց մարդ-եղբայրը: Սէրը փրկարար է ու առանց սիրոյ կեանքը անզօր է ու անիմաստ: Աստուածորդւոյն Ծնունդը կու գար բարոյապէս շրջելու այս աշխարհը եւ իր քարոզած սէրով նոր իմաստ մը կու տար մարդոց կեանքերուն: Ան «Սիրեցէ՛ք զմիմեանս»էն կ'անցնէր «սիրեցէ՛ք զթշնամիս ձեր», բարիով չարին յաղթելու պատգամին: Եւ իսկապէս այդ սէրը կու գար հիմնովին փոխելու, գօտեպնդելու եւ հոգեպէս զօրացնելու այդ օրերու Մարդը, որ ընկճուած էր իր վախերէն, մտահոգութիւններէն ու մա-

նաւանդ մահուան գաղափարէն, կը տուայտէր անորոշութեան մէջ: Քրիստոսի պատգամած սէրը կու գար իմաստաւորելու Մարդուն կեանքն ու անոր տալու նոր իտէալ մը որուն պէտք էր հասնիլ:

Ու այսօր, 20 դարեր ետք, մարդկութիւնը հարց կու տայ ինքզինքին, թէ արդեօք կրցած է իրագործել Բեթղէհէմի երկնակամարին վրայ շողացող Աստղին տեսիլքը: Դժբախտաբար, այսօրուան Մարդը՝ որ գերին դարձած է նիւթին եւ շօշափելիին, այլեւս չառաջնորդուիր Քրիստոսի փրկարար պատգամներէն, թէ «Հոգին է կենդանարար, մարմին ինչ ոչ օգնէ»: Այսօրուան Մարդուն մտքին մէջ պարտի յատակ ըլլայ այն իրողութիւնը թէ Աստուածորդուն ծնունդով էր որ Մարդուն անհատական կեանքը պիտի արժեւորուէր, եւ դարձեալ, Անոր բուժող ու սփոփիչ ձեռքն էր որ պիտի գար մեզ վեր հանելու մեր հոգեկան անկումներէն: Մանուկ Փրկչին Մսուրը զոր տակաւին այսօր կը տեսնենք մեր աչքերով, թող շինիլ եւ ազնիւ ներշնչումներու աղբիւրը ըլլայ բոլորիս համար:

Ճիշդ է որ Աստուածայայտնութեամբ փոխուեցաւ մարդկութեան պատմութիւնը, սակայն մեզի՝ հայերուս համար յատուկ նշանակութիւն ունի այս սուրբ տօնը, որ իւրաքանչիւր սկսող Նոր Տարուան հետ կը շեշտուի ու կ'ամրանայ մեր մէջ: Ամանորի սեմին եւ Աստուածայայտնութեան այս սուրբ տօնին, մենք ազգովին կը վերանորոգենք ու կը թարմացնենք մեր ապրելու, գոյատեւելու եւ յարատեւելու կամքը, եւ ճիշդ հոս է որ կը շեշտուի մեր տարբերութիւնը Նոր տարին եւ Ս. Ծննդեան տօնը նշող միւս քրիստոնեայ ազգերէն: Իւրաքանչիւր Հայ գիտակից հպարտութիւն մը ապրելու է, քանի ան միշտ տէրը եղած է հրեշտակներու քաղցր երգեցողութեան յատկանիշը կազմող երեք գաղափարախօսութիւններուն. Աստուծոյ՝ որուն հանդէպ մեր սէրը միշտ եղած է անսահման: Խաղաղութեան՝ որ խուսափած է մեզմէ ու պակսած մեզի, սակայն միշտ մնացած է մեր պատմութեան ու ազգային նկարագրին միակ մեկնակէտը: Եւ երրորդ՝ մարդոց միջեւ բարի-կամեցողութեան, որուն պերճախօս փաստը տուած ենք սփիւռքի ամբողջ տարածքին: Մէկ խօսքով, Բեթղէհէմի երկնակամարին վրայ շողացող պայծառ աստղը 2000 տարիներէ ի վեր անբաժան մասը դարձած է մեր ազգային պատմութեան, որովհետեւ ժամանակի ու քաղաքական պայմաններու խաւարչտին օրերուն, մենք միշտ հրդեհուելով այդ ինքզինք այրող աստղէն, առաջնորդուած ենք անով ու մեր ապագայ սերունդներուն փոխանցած անոր լոյսն ու կրակը:

Աղօթենք սիրելի հայորդիներ, որ Բեթղէհէմի երկնակամարին վրայ շողացող այդ պայծառ աստղը, իր լոյսով միշտ լուսաւորէ մեր սիրտերն ու հոգիները: Նայինք որ չհասնինք մեր կեանքի վախճանին առանց իմաստալից կեանք մը ապրած ըլլալու, առանց մեզմէ բան մը աւելցուցած ըլլալու մեզի յաջորդող սերունդներու հոգեւոր եւ մտաւոր գանձանակին: Աւելի լայն բանանք մեր սիրտերն ու միտքերը, ու սէր եւ հասկացողութիւն ցուցաբերենք իրար հանդէպ, որպէսզի բարիով զործադրած ըլլանք հրեշտակներուն «Ի յերկիր խաղաղութիւն եւ ի մարդիկ հաճութիւն» պատգամը:

Ծննդեան այս գեղեցիկ տօնին՝ թող մեր հոգիները եւս տեսնեն դէպի Նորածին Արքան առաջնորդող աստղը, եւ ձայնակցինք երգեցիկ հրեշտակներու խումբին կրկնելով երկնային մեղեդիին բառերը. «Փա՛ռք ի բարձունս Աստուծոյ եւ յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն», ու անոր արձագանգը թող հասնի երկրագունդի չորս ծագերը, ու մարդիկ բարի-կամեցողութիւն ցոյց տան իրար հանդէպ պահելու Աստուծոյ խաղաղութիւնը: Թող Նորածին Մանուկը անփորձ ու անխռով պահէ մեր Մայր Հայրենիքը, Հայաստանեայց Առաքելական Եկեղեցին եւ մեր ժողովուրդը, որ հակառակ իր դաժան կեանքի պայման-

ներուն, միշտ աչքերուն մէջ պահած Ս. Ծննդեան աստղին լոյսն ու ականջներուն մէջ՝ երգը հրեշտակներուն, քալած է դարերու խաւարին մէջէն միշտ հաւատալով Ծննդեան քաղցր պատգամին, «Յերկիր խաղաղութիւն եւ ի մարդիկ հաճութիւն»։ Ամէն։

Ձեզ եւ Մեզ Մեծ Աւետիս, Քրիստոս Ծնաւ եւ Յայտնեցաւ

ՄԵԾԵՐԸ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԻ ՄԱՍԻՆ

Աշխարհի լինելիութիւնը համոզիչ ապացոյցն է Աստուծոյ գոյութեան, ամենայնն Արարողին եւ Նախաշնորհին։

ԺԱՆ ԼՈՒԻ ԱԳԱՍԻՍ

Ժամանակի եւ տարածութեան միասնութեան մէջ երեւան կու գան ոչ միայն միտքը, այլեւ մտաշղթան, ուժը, բանականութիւնը, վեհութիւնը, կանխատեսումն ապագայի, իմացութիւնն ու տեսլականը ամենայնի։ Մէկ խօսքով՝ այս բոլոր որակներն ի լուր ամէնքի կ'աւետէն Աստուծոյ գոյութեան մասին, Որուն առջեւ մարդը պէտք է խոնարհի, Որուն մարդը պէտք է սիրէ։

ԺԱՆ ԼՈՒԻ ԱԳԱՍԻՍ

Այնքան մեծ է իմ յարգանքը Աստուածաշունչի նկատմամբ, որ ինչքան շուտ իմ զաւակները սկսեն կարդալ, այնքան աւելի վստահ կ'ըլլամ, որ անոնք օգտակար քաղաքացիներ եւ հասարակութեան յարգարժան անդամներ կը դառնան իրենց երկրին համար։ Երկար տարիներ է, ինչ ես կը պահպանեմ տարին անգամ մը Աստուածաշունչը գլուխ առ գլուխ ընթերցելու սովորութիւնը։ Ամէն առտու անկողինէն ելլելուն պէս կ'ընթերցեմ շորս-հինգ գլուխ, ինչն ինձմէ կը պահանջէ մօտ մէկ ժամ, եւ ինծի կը թուի, թէ օրն այդ կերպ սկսելէ առաւել նպաստաւոր ոչինչ չկայ։

ՀՈՆ ՔՈՒԻՆՍԻ ԱԳԱՍՍ

